

**Փ**ոքր եւ միջին ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության զարգացման գրավականներից մեկն է: Փոքր եւ միջին ձեռնարկությունները յուրաքանչյուր երկրի տնտեսական ու սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են: ՓՄՁ-ն էական դեր ունի նաեւ ՀՀ տնտեսական համակարգում:

Ներկայում երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ-ի տեսակարար կշիռը կազմում է 41.7%<sup>1</sup>, որը կրկնակի գերազանցում է 1999թ. մակարդակը: Դրա հետ մեկտեղ, ավելացել է նաեւ ՓՄՁ արտահանման ծավալը՝ կազմելով 17.9%<sup>2</sup>:

Հատկանշական է, որ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմում է գրանցված բոլոր կազմակերպությունների 97.7%-ը<sup>3</sup>, զբաղվածների ընդհանուր թվում՝ 42.1%<sup>4</sup>: ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը ՀՀ-ում 1000 բնակչի հաշվով կազմում է 40.2<sup>5</sup> (ը. Երեւանում՝ 55.5, ՀՀ մարզերում՝ 32.3):

ՄԱԿ-ի սահմանած մեթոդաբանությամբ հաշվարկվող ՓՄՁ զարգացման ինդեքսը հնարավորություն է ընձեռում ամբողջական պատկեր ստանալ երկրի տնտեսական համակարգում ՓՄՁ դերի եւ նշանակության մասին: Հայաստանում ՓՄՁ զարգացման ինդեքսը կազմում է 544.0<sup>6</sup>, որը 2002թ. համեմատ ավելացել է շուրջ 9 անգամ:

Վերջին տարիներին նկատվում է ՓՄՁ-ն բնութագրող ցուցանիշների դինամիկ անձ? Չնայած 2009թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը իր հետքն է թողնում նաեւ փոքր եւ միջին ձեռնարկությունների գործունեության վրա, այնուամենայնիվ դրանք՝ իրենց ճկունության, տնտեսական տարբեր իրավիճակներում արագ հարմարվողության, աշխատուժի զբաղվածության ու ինքնազբաղվածության մեծ հնարավորությունների է ձեռնարկատիրության մյուս ձեռքի նկատմամբ համեմատական այլ առավելությունների շնորհիվ, ամառվել կայուն են մնում այս իրավիճակում: Փոքր եւ միջին ձեռնարկություններն իրենց գործունեությամբ զգալի բարձրացնում են ամբողջ տնտեսության արդյունավետությունը եւ հանդիսանում են տնտեսական աճի կարեւոր գործոններից մեկը: Առավել փոքր ներդրումների հաշվին եւ կարճ ժամանակահատվածում ՓՄՁ-ները կարող են ապահովել նոր աշխատատեղեր՝ բարելավելով աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը եւ լուծելով սոցիալական մի շարք խնդիրներ: ՓՄՁ-ները առավել արդյունավետությամբ են օգտագործում տեղական հանքահումքային ռեսուրսները եւ նվազեցնում են երկրի տնտեսության կախվածությունը ներմուծումից: Այս ոլորտում համեմատաբար արագ եւ փոքր ծախսերով են ներդրվում նոր տեխնոլոգիաներն ու նորարարությունները: ՓՄՁ-ների զարգացումը մեծ դեր է խաղում հասարակության միջին խավի ձեւավորման եւ կայացման հարցում:

ՓՄՁ-ները մասնավոր հզոր տնտեսության ձեւավորման լավագույն միջոցն են, որոնք ոչ միայն պարզեցնում են երկրի տնտեսական համակարգը, այլեւ ապահովում տնտեսական աճ՝ հնարավորինս կարճ ժամանակամիջոցում: Շատ երկրներում ՓՄՁ պետական քաղաքականության մշակման հարցերով զբաղվում են արդյունաբերության եւ առեւտրի, Էկոնոմիկայի

նախարարությունների ու այլ գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումները (Թուրքիա՝ KOSGEB, Հունաստան՝ EOMMEX, Ճապոնիա՝ Փոքր ձեռնարկությունների կորպորացիա (JSBC) եւ այլն), իսկ Գերմանիայում բոլոր տարածաշրջանները, «Հողերը», ունեն բազմաօտեսակ կառույցներից կազմված (տեխնոպարկեր, արդյունաբերական գոտիներ, բիզնես ինկուբատորներ, վեներաբային եւ երաշխիքային հիմնադրամներ եւ այլն) պետական աջակցության համակարգեր: Բացի պետական կառույցներից, բոլոր երկրներում գործում են նաեւ ՓՄՁ հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ՝ առեւտրաարդյունաբերական պալատներ, ասոցիացիաներ, ֆեդերացիաներ, միություններ, ՓՄՁ զարգացման ու աջակցման հիմնադրամներ եւ այլն:

ՀՀ-ում նույնպես ՓՄՁ ոլորտի զարգացման եւ կայացման նպատակով ստեղծվել է գործում են մի շարք կառույցներ. «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ՉՄԿ), Չարգացման հայկական գործակալությունը, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը, ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատը եւ այլն: Հակիրճ անդրադառնալով յուրաքանչյուրի գործունեությանը:

«Չարգացման հայկական գործակալություն» (ՉՀԳ) ՓԲԸ-ն հիմնադրվել է 1998թ. ապրիլին, Հայաստանի կառավարության կողմից: ՉՀԳ-ի նպատակն է՝ աջակցել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը եւ խթանել արտահանումը: Գործակալությունը ներդրողներին աջակցում է երկրում գործարարություն ծավալելու, նախագիծ մշակելու հարցերում եւ կապող օղակ է գործարարների ու պետական մարմինների միջեւ, տեղեկատվություն է տրամադրում երկրում առկա ներդրումային հնարավորությունների, օրենսդրական-կարգավորիչ դաշտի վերաբերյալ: ՉՀԳ-ն բացահայտում է Հայաստանի տնտեսության՝ ներդրումային տեսանկյունից հեռանկարային ոլորտները, խթանում է ներդրումներն այդ ոլորտներում, պաշտպանում է ներդրողների շահերը: Արտահանման խթանման բնագավառում, ՉՀԳ-ն աջակցում է տեղական արտադրանքի համար արտահանման շուկաներ գտնելու հարցում, իրականացնում է շուկայական ուսումնասիրություններ եւ նոր գործընկերներ է փնտրում հայաստանյան ձեռներեցների համար՝ արտահանման ծավալներն ընդլայնելու եւ նոր արտադրատեսակներ զարգացնելու նպատակով:




Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (ՁԻՀ) Հայաստանի ՏՏ ոլորտի ընկերություններին բիզնեսի զարգացման եւ ինկուբացիոն ծառայություններ մատուցող կազմակերպություն է: ՁԻՀ-ի հիմնական գործունեությունը ծառայում է տեխնոլոգիական ձեռնարկությունների զարգացման բարենպաստ դաշտի ստեղծմանը: Բիզնեսի զարգացման ուղղության նպատակն է՝ բարձրացնել հայկական տեխնոլոգիական ընկերությունների մրցունակությունը միջազգային շուկաներում, հաստատել գործարար կապեր միջազգային ՏՏ ոլորտի հիմնական կենտրոնների հետ, աջակցել

## ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Նարինե  
ԱՐԱԲՅԱՆ

ԵրԾԾԴՀ  
տնտեսագիտության  
ֆակուլտետի  
մագիստրանտ





SS ընկերություններին՝ ներգրավելու արտասահմանյան եւ տեղական ներդրումներ, ընկերություններին հաղորդակից դարձնել միջազգային փորձին եւ ծանոթացնել ոլորտի արդի գարգացումներին, ինչպես նաեւ աջակցել ձեռնարկատիրական գործունեությանը եւ խթանել տեխնոլոգիական նոր ձեռնարկությունների ստեղծումը Հայաստանում:

Առեւտրաարդյունաբերական պալատների համակարգը ներառում է ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատը, Երեւան քաղաքի եւ մարզերի առեւտրաարդյունաբերական պալատները, ինչպես նաեւ ՀՀ ԱԿԴ-ի հիմնադրած «Արմէքսպերտիզ» ՍՊԸ-ն, ցուցահանդեսների կազմակերպման «ԷԶՄՈՅԵՆՏ» ՍՊԸ-ն եւ պալատների ստեղծած այլ իրավաբանական անձանց: Մարզային պալատները ՀՀ օրենքով սահմանված կարգով միավորվում եւ ստեղծում են իրենց ընդհանրական շահերը ներկայացնող ՀՀ ԱԿԴ-ն, որը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առեւտրային կազմակերպություն է: Այն համակարգում է մարզային պալատների գործունեությունը, ներկայացնում է Պալատների համակարգը՝ ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում: ՀՀ ԱԿԴ-ին վերապահված գործառնություններից է փոքր եւ միջին ձեռնարկատիրությանն աջակցության պետական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը մասնակցությունը:

Այնուամենայնիվ՝ ՓՄՁ ոլորտին պետական աջակցության գործում առավել մեծ ներդրում ունի «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության գարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ), որը Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականությունն եւ ոլորտի գարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող հիմնական կառույցն է:

Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ը հիմնադրվել է 2002թ.: Այն ՀՀ-ում առաջին ազգային կառույցն է, որը կոչված է իրականացնել փոքր եւ միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության եւ ոլորտի գարգացմանն ուղղված ծրագրերը, ապահովել կապը ՓՄՁ սուբյեկտների եւ պետական կառույցների միջեւ: Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ն իր գործունեությունն իրականացնում է Երեւանում գտնվող կենտրոնական գրասենյակի եւ ՀՀ բոլոր մարզերում ստեղծված մասնաճյուղերի միջոցով:

Շատ երկրներում, այդ թվում եւ Հայաստանի Հանրապետությունում, ՓՄՁ գարգացմանն ուղղված պետական քաղաքականության համալիրը կազմված է 3 կարեւոր բաղադրիչից: Առաջինը գործարար բարենպաստ միջավայրի ապահովումն է (հարկային եւ մաքսային քաղաքականություն, արդար մրցակցային դաշտ, հակամենաշնորհային քաղաքականություն եւ այլն), երկրորդը տեխնիկական (գործարար տեղեկատվություն եւ խորհրդատվություն, կադրերի պատրաստում ու վերապատրաստում եւ այլն), եւ երրորդը ֆինանսական (ֆինանսաբանկային համակարգ, վեճաբանության եւ երաշխիքային հիմնադրամներ, միկրոֆինանսավորում, լիզինգ, ապահովագրություն եւ այլն) աջակցությունն է: Անհրաժեշտ է նշել, որ վերը նշված բաղադրիչները փոխկապակցված եւ փոխադրյալ են մեկը մյուսով:

Վերջին տարիներին Հայաստանում մեծ քայլեր են կատարվում ՓՄՁ-ին աջակցության միջոցառումների ընդլայնման եւ աջակցության նոր ծրագրերի ու մեխանիզմների մշակման գործում: Նմանօրինակ քայլ է համագործակցությունը ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (UNDP), Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA), Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության երեւանյան գրասենյակի (OSCE), Միացյալ Թագավորության միջազգային գարգացման դեպարտամենտի (UK DFID) հետ:

ՓՄՁ ոլորտին աջակցության գործում մեծ դեր ունի նաեւ Հայաստանում Ձեռնարկությունների Եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի բացումը: Ձեռնարկությունների Եվրոպական ցանցը, որը գործունեությունը պաշտոնապես սկսել է 2008թ. փետրվարից, ներառում է ավելի քան 44 անդամ երկրների շուրջ 600 գործընկեր կազմակերպություններ, մասնագիտական գործարար բազմաթիվ ծառայություններ է տրամադրում շահառու կազմակերպություններին ինչպես տեղային՝ Եվրոպական մակարդակում, այնպես էլ Եվրոպայից դուրս:

2002-08թթ. պետական աջակցության համար պետական բյուջեից ուղղվել է շուրջ 2 մլրդ՝ ՀՀ դրամ, եւ ավելի քան 20 հազար սկսնակ ու գործող ՓՄՁ-ներ ստացել են աջակցություն: Ընդ որում՝ ՓՄՁ-ին պետական աջակցության տարեկան ծրագրերի համար բյուջեից հատկացումները տարեցտարի ավելանում են, եւ 2009թ. համար դրանք կազմել են 573.5 մլն դրամ:

Բացի այդ, ՀՀ կառավարության կողմից տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունները գործարարների համար հնարավորինս մեղմելու նպատակով 2009թ. հունիսի 26-ին ընդունվեց ՀՀ կառավարության որոշում՝ տնտեսության վարկավորման ծրագրի մասին: Ծրագրի գումարը կազմում է 90 մլրդ դրամ եւ նպատակ ունի խթանել ՀՆԱ-ի աճը՝ ֆինանսական ճգնաժամի պայմաններում տնտեսավարող սուբյեկտների վարկային պահանջարկը մասնակի բավարարելու միջոցով: Ծրագրում երկրորդ բաղադրիչը փոքր եւ միջին ձեռնարկատիրության վարկավորումն է: Բաղադրիչի վարկառուներն է «Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ» հիմնադրամը կողմից հիմնադրված, լիցենզավորված ունիվերսալ վարկային կազմակերպությունը՝ հիմնադրամի որոշած ուղղություններով շահառուներին վարկավորելու համար: Բաղադրիչի ֆինանսական հատկացման չափը կազմում է 6.4 մլրդ դրամ<sup>8</sup>:

Հայաստանում ՓՄՁ-ին աջակցության ժամանակակից ենթակառուցվածքները եւ գործուն մեխանիզմներն անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծել ՓՄՁ հեռանկարային գարգացման համար՝ ուղղված գիտատար եւ նորարարական արտադրություններին աջակցմանը, տեխնոլոգիաների փոխանցման նպատակով պայմանների ձեւավորմանը եւ ՓՄՁ սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը:

1. Փոքր եւ միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ., Տեղեկագիր (5-րդ հրատարակություն), Երեւան 2009, էջ 15  
2. Նույն տեղում, էջ 33  
3. 2009թ. հունվարի 1-ի դրությամբ  
4. Փոքր եւ միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ., էջ 30  
5. Նույն տեղում, էջ 28  
6. Նույն տեղում, էջ 44  
7. Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ, Հաշվետվություն, 2008, Երեւան 2009, էջ 10  
8. Հավելված ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի թիվ 717-Ա որոշման